ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԵՎ ՊՎԱ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Town Hall ձևաչափով իրականացված հանդիպում-քննարկման արդյունքների վերլուծություն

Երևան, 2019 թ.

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «Աստղացոլք» ՀԿ-ի, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող «Քայլ դեպի արդար Հայաստան» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Town Hall ձևաչափով հանդիպումը տեղի ունեցավ մարտի 27-ին, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի գրասենյակում: Հանդիպում-քննարկմանը մասնակցեցին Պրոբացիայի ծառայության պետ Արսեն Նավասարդյանը, Պրոբացիայի ծառայության աշխատակիցներ, Քրեակատարողական ծառայության ՍԻԱՀ բաժնի պետ Մարինե Գասպարյանը, ոլորտում մասնագիտացած ՀԿ-ների ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ:

Քննարկումը վարում էին Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչներ Լեո Տիգեսը, Սթիվեն Պիթսը և «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի կառավարման խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանը: Մասնակիցների ուշադրությանն են ներկայացվել ոլորտում առկա հիմնախնդիրները, որոնք վերհանվել են «Քայլ դեպի արդար հայաստան» ծրագրի շրջանակներում կատարված մոնիթորինգի արդյունքում: Երկու խմբով քննարկվել են նշված հիմնահարցերը և առաջարկվել լուծման ուղիներ:

Town Hall ձևաչափով այս հանդիպման արդյունքներն ամփոփող սույն փաստաթուղթը հիմք կհանդիսանա ոլորտին առնչվող հանրային քաղաքականության մշակման համար: Իրականացված քննարկման արդյունքում Պրոբացիայի և ՊՎԱ ինստիտուտների զարգացման ռազմավարության մշակմանն ուղղված առաջարկությունների ամփոփ տարբերակը ներկայացված է ստորև:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Խնդիր 1 - Խորհրդատվական զեկույցներ

Խորհրդատվական զեկույց տրամադրվում է և՛ Պրոբացիայի ծառայության, և՛ քրեակատարողական հիմնարկի կողմից, ընդ որում զեկույցների բովանդակությունը մեծ մասսամբ համընկնում է և ներկայացնում է տեղեկատվություն դատապարտյալի բանտում անցկացրած ժամանակահատվածի մասին: Բացառություն է կազմում միայն դատապարտյալի ընտանիքի և միջավայրի մասին հատվածը, որը լրացվում է միայն Պրոբացիայի ծառայության կողմից: Խնդրահարույց է այն հանգամանքը, որ Պրոբացիայի ծառայողը չունի բավական ժամանակ դատապարտյալի ՔԿՀ-ում անցկացրած շրջանի մասին հիմնավոր կարծիք կազմելու համար: Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ զեկույցը դրական կամ բացասական եզրահանգում է տալիս, որը ստորագրող և դատարանում ներկայացնող անձինք տարբեր են և կարող են տարբեր կարծիք ունենալ դեպքի մասին:

Որպես խնդրի լուծման հնարավոր ուղի առաջարկվեց կիսել պատասխանատվությունը՝ ՔԿՀ աշխատակիցները կկազմեն զեկույց դատապարտյալի հիմնարկում անցկացրած ժամանակահատվածի մասին, իսկ Պրոբացիայի ծառայողը կուսումնասիրի դատապարտյալի ընտանիքը, տունը, միջավայրը և սեփական ռեսուրսները՝ հասկանալու համար, թե պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում արդյոք ծառայությունն ի վիճակի կլինի՞ վերահսկել վերջինիս վերասոցիալականացման գործընթացը, թե՝ ոչ:

Խնդիր 2 - Օբյեկտիվ չափորոշիչներ

Երկու զեկույցի ձևերն էլ օբյեկտիվորեն հիմնավորված լինելու խնդիր ունեն: Քրեակատարողական ծառայությունը հակված է խնդիրը լուծել բալային համակարգի երմուծմամբ, որի շրջանակներում նախարարի գործող հրամանով սահմանված չափորոշիչների համար կմշակիվի համապատասխան բալ և շեմ, որը հաղթահարած դատապարտյալները կներկայացվեն վաղաժամկետ ազատման: Պրոբացիայի

ծառայությունը հակված է մշակել ռիսկերի գնահատման գործիք՝ հիմնված գործող ռիսկերի և կարիքների գնահատման գործիքի վրա, որը պահի դրությամբ գործում է միայն պրոբացիայի շահառուների համար:

Խնդիր 3- Այցելություններ քրեակատարողական հիմնարկ

Պրոբացիայի ծառայողը, ըստ գոծող իրավակարգավորման, պարտավոր է առնվազն մեկ անգամ այցելել դատապարտյալին ՔԿՀ-ում: Մեկ այցելությունը չի ապահովում անհրաժեշտ արդյունավետությունը: Ավելի շատ այցելություններն անհնար են երկու հիմնական պատճառով՝ 1. պրոբացիայի ծառայողը ծանրաբեռնված է և 2. պրոբացիայի ծառայողի ճանապարհածախսը բյուջեից չի ֆինանսավորվում, ինչի արդյունքում վերջիններս ստիպված են իրենց գրպանից դնել ճանապարհածախսը: Նշենք նաև, որ ծառայողի աշխատավարձը միջինից ցածր է:

Որպես խնդրի լուծման հնարավոր ուղի առաջարկվեց Պրոբացիայի զեկույցը սահմանափակել դատապարտյալի ընտանիքին, միջավայրին վերաբերող ուսումնասիրությամբ և բյուջեից գումար հատկացնել՝ ճանապարհատրանսպորտային ծախսերը փակելու նպատակով:

Խնդիր 4- Տղեկատվության աղբյուրները ՊՎԱ գործընթացի համար

Ե՛վ Պրոբացիայի ծառայության աշխատակիցները, և՛ ՔԿՀ-ի աշխատակիցները զեկույցում օգտագործվող տեղեկատվության հիմնական մասը ստանում են ՔԿՀ-ից, ինչը տրամաբանական է ՔԿՀ-ի աշխատակցի տեսանկյունից, բայց ոչ Պրոբացիայի ծառայության, որի գործառությթները արդյունքում բավական հաճախ վերածվում են ընդամենը ՔԿՀ-ի աշխատակցի գործի կրկնության: Հարկավոր է նաև նշել, որ արդյունքում Պրոբացիայի ծառաությունը քիչ ժամանակ և ջանք է ներդնում իր բուն գործառույթի՝ դատապարտյալի ընտանիքի, տան, միջավայրի մասին տեղեկատվություն հավաքելու մեջ:

Լուծումը նույնն է՝ Պրոբացիայի զեկույցը սահմանափակել դատապարտյալի ընտանիքին, միջավայրին վերաբերող ուսումնասիրությամբ, ինչպես նաև մշակել

գործիքներ, որոնց միջոցով այս ուսումնասիրությունը հնարավորինս արդյունավետ և հիմնավոր կդառնա:

Խնդիր 5- ՊՎԱ՝ ավելի շատ պայմաններ

ՊՎԱ ոլորտը տեսականորեն պիտի հիմնված լինի դատարանի կողմից դրվող պայմանների և Պրոբացիայի ծառայության կողմից այդ պայմանների իրականացման վերահսկողության վրա: Այսօր իրավաճիակը Հայաստանում այլ է՝ դատարանը հազվադեպ է պայմաններ նշանակում, Պրոբացիան հազվադեպ է նման պայմանների առաջարկներով հանդես գալիս: Գործող իրավական կարգավորումներով սահմանված պայմանների ցանկը թեև սպառիչ չէ, բայց փորձը ցույց է տալիս, որ նշված պայմաններից դուրս դատարանները որոշումներ չեն կայացնում:

Որպես խնդրի լուծման հնարավոր ուղի առաջարկվեց զեկույցի ձևում ներառել առաջարկ պայմանների մասին, որոնց առաջադրման դեպքում Պրոբացիայի ծառայությունը կերաշխավորի վերասոցիալականացման գործընթացում իր ակտիվ, մասնագիտացված միջամտությունը:

Խնդիր 6- Զեկույցի հիմնավորման հետ կապված խնդիրներ

Պրոբացիայի ծառայողը խորհրդատվական զեկույցը եզրափակում է դրական կամ բացասական եզրակացությամբ, որը հաճախ թույլ հիմնավորված է: Դատարանը և մեղադրող կողմը հաճախ հիմնվում են այն հանգամանքի վրա, որ զեկույցում առկա տեղեկատվությունը ձեռք է բերվել դատապարտյալի հետ մեկ հանդիպման արդյունքում և որպես հետևանք վստահելի չէ: Բացի այդ, հանդիպում են դեպքեր, երբ դատապարտյալի տան, միջավայրի մասին տեղեկատվություն դատարանում հրապարակելու արդյունքում վտանգի տակ է դրվում դատապարտյալի ընտանիքը: Արդյունքում Պրոբացիայի ծառայողն իրեն զգում է, որպես համակարգի թույլ օղակ:

Ռաջարկվեց զեկույցի ձևից հանել եզրակացության հատվածը՝ պրոբացիայի ծաայությանը թողնելով պայմաններ առաջարկոլու դերը:

Խնդիր 7- Պրոբացիայի աշխատակցի հանդեպ ճնշումներ

Դատապարտյալը և/կամ վերջինիս ընկերները, բարեկամները հաճախ ճնշում են գործադրում Պրոբացիայի աշխատողի վրա՝ զանգել սպառնալով կամ հենց դատարանի շենքում սպառնալիքներ հնչեցնելով: Հաճախ այդ սպառնալիքները անուղղակի բնույթ են: Այս իրավիճակը բարդացնում է Պրոբացիայի ծառայողի աշխատանքը, ինչպես նաև նսեմացնում ամբողջ ծառայության դերը արդարադատության համակարգում:

Լուծումը՝ ուղղակի կամ անուղղակի սպառնացող դատապարտյալին ՊՎԱ չշնորհելը, նաև այն դեպքերում, երբ սպառնում են վերջինիս ընկերներ/ բարեկամները:

Խնդիր 8- Համագործակցությունը այլ դերակատարների հետ

Համագործակցությունը արդարադատության ոլորտի այլ դերակատարների, ինչպես նաև ՀԿ-ների հետ համակարգված չէ: Հաշվի առնելով ծառայության ռեսուրսների սղությունը, նման համագործակցությունը կարող է զգալիորեն ուժեղացնել ոլորտը:

Այս ուղղությամբ արդեն ակտիվ գործունեություն է ծավալում «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ինֆոգրաֆիկա